

Անտոնյան Անահիտ Արմենի

Ծնվել է 31.01.1991թ. Երևան քաղաքում: Սովորել է Սիամանթոյի անվան թիվ 162 միջնակարգ դպրոցում, այնուհետև՝ ԵՊՀ առընթեր Ա. Շահինյանի անվան Ֆիզմաթ դպրոցում: 2007-2011թթ. և 2011-2013թթ. սովորել և գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը՝ ստանալով համապատասխանաբար բակալավրի և մագիստրոսի աստիճան: 2013թ. ընդունվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտուրան՝ որպես քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ: 2011-2012թթ. աշխատել է «Դեֆենդո» ՍՊԸ իրավաբանական գրասենյակում՝ որպես իրավախորհրդատու, իսկ 2012թ. մայիս-հոկտեմբեր ամիսներին աշխատել է նաև «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ում՝ որպես իրավաբանական ծառայության աշխատակից: Այնուհետև, աշխատանքային գործունեությունը շարունակել է ՀՀ Ազգային ժողովում՝ 2013-2014թթ. աշխատելով որպես ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի փորձագետ, իսկ 2014-2017թթ.՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի իրավական հարցերով խորհրդական: 2017թ. հունվարի 10-ից զբաղեցնում է ՀՀ արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչության պետի պաշտոնը: Աշխատանքային գործունեությանը զուգահեռ համագործակցել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի հետ՝ իրավական ակտերի նախագծման փուլում ներգրավվելով որպես փորձագետ: Տիրապետում է անգլերեն և ռուսերեն լեզուներին: Ամուսնացած է, ունի որդի:



Մուշեղյան Անուշավան Գագիկի

Ծնվել է 08.08.1987թ. Երևան քաղաքում: 2004թ. ավարտել է Դերենիկ Դեմիրճյանի անվան թիվ 27 միջնակարգ դպրոցը: 2004թ. ընդունվել է «Գլաձոր» համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: 2005թ. զորակոչվել է ՀՀ զինված ուժեր: 2007թ. զորացրվել է, ստանալով «ավագ սերժանտ» զինվորական կոչում: Վերադառնալով ծառայությունից՝ ուսումը շարունակել է և ավարտել 2010թ.՝ ստանալով իրավագիտության բակալավրի աստիճան: Նույն թվականին ընդունվել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա միջազգային գիտակրթական կենտրոն և ավարտել 2012թ.՝ ստանալով իրավագիտության մագիստրոսի աստիճան: 2010թ.համատեղելով ուսմանը աշխատել է «Թագուհի Կլեոպատրա» ՍՊ ընկերությունում՝ որպես իրավաբան: 2011-2012թթ. աշխատել է ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայությունում՝ որպես գլխավոր մասնագետ: 2014-2015թ. աշխատել է «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲ ընկերությունում՝ որպես մասնագետ: 2016թ. աշխատել է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի անձնակազմի կառավարման վարչության մասնագետի պաշտոնում: 2018 թվականից առ այսօր շարունակել է պաշտոնավարել Դատական դեպարտամենտի Դատական պրակտիկայի վերլուծության և մշտադիտարկման վարչության Դատական պրակտիկայի վերլուծության բաժնի առաջատար մասնագետի պաշտոնում: 2018թ. հանդիսանում է Եվրոպական համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ և միևնույն ժամանակ նույն ամբիոնի դասախոս: Ունի Հայաստանի Հանրապետության դատական ծառայության առաջին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան: Ամուսնացած չէ:

Հովհաննիսյան Աշոտ Արթուրի



Ծնվել է 07.04.1987թ. Երևան քաղաքում: 1993-2003թթ. սովորել է Երևանի Հակոբ Օշականի անվան թիվ 172 անգլիական թեքումով դպրոց-վարժարանում: 2003-2007թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը: 2007-2009թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: 2009-2011թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան: 01.08.2009-30.11.2010թթ. աշխատել է «Լանդրասիկ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան: 01.12.2010-04.05.2011թթ. աշխատել է «Սոֆթ Տրանս» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան: 13.05.2011-21.10.2013թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի օգնական: 22.10.2013-17.03.2014թթ. աշխատել է «Տոնէքս» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան: 18.03.2014-09.07.2015թթ. աշխատել է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի օգնական: 10.07.2015-10.02.2016թթ. աշխատել է ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական: 11.02.2016-03.09.2017թթ. աշխատել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական: 04.09.2017-31.01.2019թթ. աշխատել է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի օգնական: 01.02.2019-06.06.2019թթ. աշխատել է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի ավագ օգնական («Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի օգոստոսի 6-ի «Դատական դեպարտամենտում դատական ծառայության, դատական կարգադրիչների ծառայության և քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և հաստիքների քանակը հաստատելու մասին» թիվ ԲԴԽ-31-Ո-74 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ բարձրագույն դատական խորհրդի 25.03.2019 թվականի թիվ ԲԴԽ-18-Ո-62 որոշման համաձայն 01.04.2019 թվականից շարունակել է պաշտոնավարել՝ որպես ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորի օգնական): 06.06.2019 թվականից առ այսօր աշխատում է «Արդշինբանկ» ՓԲԸ-ում՝ որպես ավագ իրավախորհրդատու (դատական պաշտպանության գծով): 2012 թվականից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ (արտոնագիր թիվ 1462): Տիրապետում է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներին, ինչպես նաև տիրապետում է MS office, Internet, Irtek, Lite Insurance, Meysis, 1C և LS Bank համակարգչային ծրագրերին: Ամուսնացած է և ունի երկու երեխա:



Արզումանյան Կիմա Վաչագանի

Ծնվել է 13.07.1986թ.-ին Երևան քաղաքում: 2003թ. ավարտել է Երևանի թիվ 87 միջնակարգ դպրոցը: 2007թ. գերազանցության դիպլոմով ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտություն ֆակուլտետը և շնորհվել է իրավագիտության բակալավրի աստիճան: 2009թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան և շնորհվել է իրավագիտության մագիստրոսի աստիճան: 22.12.2008-12.07.2009թթ. աշխատել է ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների վարչության կրտսեր մասնագետի պաշտոնում: 12.07.2009-01.01.2010թթ. աշխատել է ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների վարչության մասնագետի պաշտոնում: 01.01.2010-22.12.2010թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի կազմակերպաիրավական վարչության մասնագետի պաշտոնում: 22.12.2010 թվականից աշխատում է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորի ավագ օգնականի պաշտոնում: 22.06.2009թ. շնորհվել է ՀՀ դատական ծառայության 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան, 12.07.2009թ.՝ ՀՀ դատական ծառայության 1-ին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, 22.12.2010թ.՝ ՀՀ դատական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան: 2009-2011թթ. անցկացված դատական ծառայողների վերապատրաստման ժամանակ Դատական դպրոցում դասախոսել է «Իրավաբանական գիր» առարկան: 2013թ. դասախոսել է ՀՀ ոստիկանության ակադեմիայում՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության աշխատակիցներին վերապատրաստման ժամանակ՝ «ՀՀ քաղաքացիական ծառայության օրենսդրություն» առարկան: 2012թ. մասնակցել է Երևան քաղաքում տպագրված «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները» գրքի կազմման աշխատանքներին: 2013թ. Փաստաբանական պալատի կողմից ստացել է փաստաբանի արտոնագիր: Տիրապետում է հայերեն /գերազանց/, անգլերեն /լավ/ և ռուսերեն /լավ/ լեզուներին: Ամուսնացած է, ունի երկու երեխա:



Դալլաքյան Նանա Կոնստանդինի

Ծնվել է 30.12.1980թ. Երևան քաղաքում: 1996-2000թթ. սովորել և ավարտել է «ՄՅՈՒԴ» իրավաբանական ինստիտուտը՝ ստանալով «Իրավագիտություն» մասնագիտությամբ իրավագիտության բակալավրի աստիճան: 2009թ. պաշտպանել և ստացել է պետական նմուշի դիպլոմ: 2011թ. ընդունվել է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա գիտակրթական միջազգային կենտրոնի (ՀՀ ԳԱԱ ՄԳԿ) իրավագիտության ֆակուլտետ մագիստրատուրան: 30.12.2009-10.11.2010թթ. աշխատել է «Գլոբալ» երիտասարդական հիմնադրամում՝ որպես Եվրոմիության կողմից ֆինանսավորվող «Կանայք և քաղաքացիական պաշտպանություն» ծրագրի իրավաբան: 16.11.2010-10.01.2012թթ. աշխատել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲ ընկերությունում՝ որպես ներդրումային ծրագրերի համակարգման վարչության տնօրենի օգնական: 09.01.2012-31.01.2013թթ. աշխատել է «ՍԱՈՒՂ» կազմակերպության «ՍԱՈՒՂ Սևան Սերվիսիս» Հայաստանյան մ/ճ- ում՝ որպես ներդրումային ծրագրերի համակարգման վարչության տնօրենի օգնական-գրասենյակի մենեջեր: 08.01.2013-01.10.2014թթ. աշխատել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ Ներդրումային ծրագրերի համակարգման վարչության կողմից, Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ, իրականացվող Համայնքային ջրամատակարարման ծրագրում՝ որպես գրասենյակի համակարգող: 15.01.2013 թվականից մինչ օրս աշխատում է «ԼԵՔՍ ԼԱԲ» ՍՊԸ իրավաբանական գրասենյակում որպես փաստաբան: 11.08.2014-15.02.2015թթ. համատեղության կարգով աշխատել է «ԲԱՐՍԻՍ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան: 01.10.2014-03.03.2015թթ. աշխատել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ում՝ որպես Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի իրավաբան: 11.08.2014 թվականից մինչ օրս աշխատում է «ԱՆԴԱԿՈ» ՍՊԸ-ում՝ որպես խորհրդատու-իրավաբան: 15.02.2015 թվականից մինչ օրս աշխատում է «ԲԱՐՍԻՍ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբանական բաժնի ղեկավար: 14.07.2012թ. ստացել է փաստաբանի գործունեության թիվ 1415 արտոնագիր: Այրի է, ունի երկու երեխա:



ՍԱՀԱԿՅԱՆ ՆԱՆԵ ԳԱՌՆԻԿԻ

Ծնվել է 12.03.1991թ. Լոռու մարզի Վանաձոր քաղաքում: 2007-2011թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը՝ ստանալով իրավագիտության բակալավրի աստիճան (գերազանցության դիպլոմ): 2011-2013թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան՝ ստանալով իրավագիտության մագիստրոսի աստիճան (գերազանցության դիպլոմ): 2013-2017թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտուրան: 2012թ. փետրվար ամսից մինչև նոյեմբեր ամիսն աշխատել է «Սզնի» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան: 2012թ. նոյեմբեր ամսից մինչև 2016թ. մայիս ամիսն աշխատել է Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական: 2016թ. մայիսից մինչև 2019թ. փետրվարն աշխատել է որպես ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության ավագ մասնագետ, իսկ 2019թ. փետրվարից մինչև սեպտեմբեր՝ որպես նույն ծառայության գլխավոր մասնագետ: Ունի Հայաստանի Հանրապետության դատական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան: 2019թ. սեպտեմբերից աշխատում է ՀՀ արդարադատության նախարարությունում՝ որպես իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար: 2015թ. սեպտեմբերից աշխատում է Հայաստանում Ֆրանսիական համալսարան հիմնադրամում՝ որպես դասախոս: 2016 և 2017 թվականներին եղել է «Քաղաքացիական դատավարություն» առարկայի պետական քննական հանձնաժողովի անդամ: 2014-2015թթ. սովորել է ՀՀ փաստաբանական դպրոցում: Ունի փաստաբանական գործունեության արտոնագիր: 2016թ. հունիսին ՀՀ արդարադատության նախարարի կողմից նշանակվել է՝ որպես Արդարադատության ակադեմիայում ուսուցանող դատավորների թեկնածուների հերթական քննության գնահատման հանձնաժողովի անդամ: Եղել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի որոշումների 2015, 2016, 2017 թվականների ընտրանիների և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 2015, 2016, 2017 թվականների տարեկան հաշվետվությունների կազմող խմբի անդամ: Թվով 11 գիտական հոդվածի հեղինակ է: Ամուսնացած չէ:



Աբովյան Սիմա Լևոնի

Ծնվել է 17.06.1983թ. Երևան քաղաքում: 2000-2005թթ. գերազանցությամբ ավարտել է Երևանի ՙԳալիք՚ Համալսարանի իրավագիտության ֆակուլտետը՝ իրավագետի որակավորմամբ: 2007-2009թթ. գերազանցությամբ ավարտել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրան՝ իրավագիտության մագիստրոսի որակավորմամբ: 10.03.2008-01.11.2011թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնականի ժամանակավոր պաշտոնակատար: 09.01.2012-03.05.2012թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնականի ժամանակավոր պաշտոնակատար: 12.09.2012 - 26.10.2012թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական: 16.10.2010 թվականին ստացել է ՀՀ Փաստաբանների պալատի փաստաբանական գործունեության թիվ 984 արտոնագիրը, որի գործողությունը, համաձայն իր դիմումի, կասեցվել է: 01.11.2012 թվականից մինչև 31.05.2013 թվականն աշխատել է «Իրավական եռանկյունի» ՍՊԸ-ում, որպես իրավաբան: 07.06.2013-25.01.2018թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական: 26.01.2018 թվականից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական, շնորհվել է Հայաստանի Հանրապետության դատական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան: Ունի երկու երեխա:



Պողոսյան Սյուզաննա Ստյոպայի

Ծնվել է 17.03.1980թ. Երևան քաղաքում: 1997թ. ավարտել է Երևանի թիվ 113 դպրոցը, գերազանց առաջադիմությամբ՝ շնորհվել է ոսկե մեդալ: 2001թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2003թ. Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան՝ «Քաղաքացիական իրավունք» մասնագիտացմամբ: 2009թ. սովորել է «Թաֆթս» համալսարանի «Ֆլեթչեր»-ի դիվանագիտության և իրավունքի դպրոցում, մասնակցել է «Միջազգային իրավունք և դիվանագիտություն» խորագրով դասընթացին: 2001-2004թթ. աշխատել է «Ֆոուլ Պրես» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան: 2004-2005թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչությունում՝ կամավոր: 2005-2007թթ.՝ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչությունում՝ որպես առաջատար մասնագետ: 2007-2008թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի օգնական: 2009-2011թթ. աշխատել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմում՝ իրավաբանական բաժնի պետ, 2012-2017թթ.՝ «Մուլտի Գրուպ» կոնցեռն ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու: 2013 թվականից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ՝ փաստաբան (թիվ 1682 արտոնագիրը կասեցված է), 2014-2017թթ.՝ <<Լեքսարթ>> փաստաբանական գրասենյակ ՍՊԸ-ում՝ որպես տնօրեն: 2017 թվականի հոկտեմբերի 16-ից աշխատում է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի աշխատակազմում՝ որպես իրավաբանական և վարույթների վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար: Մասնակցել է մասնագիտական մրցույթային դասընթացների՝ 2004թ.-ին ՀՀ Կենտրոնական բանկում՝ «Կենտրոնական բանկ ներածական դասընթացին»: 2010թ.-ին Երևան քաղաքում մասնակցել է Ժնևի համալսարանի կողմից կազմակերպված (The Graduate Institute Geneva) «Միջազգային հարաբերություններ, մարդու միջազգային իրավունքներ և շրջակա միջավայր» դասընթացին, 2017թ. Ֆրանսիայում՝ «Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա», Ստրասբուրգում՝ Բաց հասարակության հիմնադրամ (OSI, CPI) մրցույթային դասընթացներին: Տիրապետում է անգլերեն և ռուսերեն լեզուներին: Ամուսնացած է ունի մեկ որդի և մեկ դուստր: